С помощью графич. работами



# ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵՐՈՎ

Հայկական ՍՍՀ վաստակավոր նկարիչ Ռուդոլֆ Խաչատրյանի անունը քաջածանոթ է սովետական կերպարվեստի գիտակների ու արվեստասերների շրջանում: Առաջին իսկ ցուցահանդեսներից նա ներկայացել է իբրև ազգային գունեղ մտածողությամբ արվեստագետ, գրաֆիկական ժանրի ինքնատիպ նկարիչ: Նկարել սկսել է մանուկ հասակից, իսկ տասնութ տարեկանից արդեն գրաֆիկական աշխատանքներով մասնակցում էր հանրապետական ցուցահանդեսներին: Ուսումնասիրելով եվրոպական դասական արվեստի վարպետների, մասնավորապես՝ Ռեմբրանդի և Դյուրերի ստեղծագործությունները, նա միաժամանակ աշակերտում էր ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Երվանդ Քոչարին, որը ևս մեծ ազդեցություն թողեց երիտասարդ նկարչի ստեղծագործական անհատականության ու գեղարվեստական սկզբունքների ձևավորման վրա:

Արդեն մեկ շաբաթ է, ինչ Հայաստանի նկարչի տան ցուցասրահներից մեկը տրամադրվել է նկարչի անհատական ցուցահանդեսին, ուր ներկայացված են նրա վերջին տարիների գրաֆիկական լավագույն աշխատանքները: Մայրաքաղաքի արվեստասերները մեծ հետաքրքրությամբ են ծանոթանում մի քանի տասնյակ մատիտանկարներին ու գծանկարներին: Խորությամբ և կատարման վարպետությամբ հիացնում են հատկապես դիմանկարները՝ «Մարգարիտա», «Ծամով աղջիկ», «Ֆրանչեսկա», «Մեր հրեուհի», «Մաշան» և այլ գործեր:

Ռուդոլֆ Խաչատրյանի «Զկնեռով նատյուրմորտ», «Աբու-Լալա-Մահարի», «Ծաղիկներ», «Մայրամիկը պատուհանի մոտ», «Թղթե հրեշտակով նատյուրմորտ», «Հուդիթ» գրաֆիկական աշխատանքները դիտողից պահանջում են ակնդետ հայացք, ստիպում ավելի սիրել գրաֆիկական արվեստը: Նկարիչն իր աշխատանքներում էֆեկտներ չի որոնում, ձգտում է բնականության, որպեսզի կտավին հանձնված պահը, վիճակը լինի ճշմարտացի, հոգեբանորեն համոզիչ:

Ապրելով ու ստեղծագործելով Մոսկվայում, երիտասարդ նկարիչը հաճախակի շփվում է հայտնի արվեստագետների հետ: Դրա արդյունքն են վերջին երկու-երեք տարիներին կատարված մատիտանկարները՝ «Ե. Եվստիգնեև», «Անատոլի Բոչարով», «Կինոռեժիսոր Մ. Շվեյցեր», «Առնո Բաբաջանյան», «Դիրիժոր Լև Մարկիզ», «Դերասանուհի Նատալյա Սայկո», «Կինոօպերատոր Սերգեյ Ֆիլիպով» և այլ աշխատանքներ:

Ռուդոլֆ Խաչատրյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսները բացվել են նաև Մոսկվայում, Լենինգրադում, Օդեսայում: 1957 թվականից սկսած նրա գործերն անընդմեջ ցուցադրվել են ոչ միայն հանրապետական ու միութենական ցուցահանդեսներում, այլև ԳԴՀ-ում, Լեհաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Ավստրիայում և ամենուր արժանացել բարձր գնահատականի:

ԱԼ. ՄԱՐԳԱՐՅԱՆ



Լուսանկարներում.— Ռ. Խաչատրյանի աշխատանքներից. «ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ», «ԾԱՂԻԿՆԵՐ», «ԼՈՒՍԻՆՆԵՆ»:

*Լուսանկարները՝ Ա. Եսայանի*

## ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ

Կիևի Ա. Ն. Ռադիշչևի անվան քաղաքային մասսայական գրադարանում տեղի ունեցավ գրական երեկո՝ նվիրված Ստեփան Զորյանի ծննդյան 90-ամյակին:

Արձակագրի կյանքի և գրական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Ուկրաինական ՍՍՀ վաստակավոր ուսուցչուհի Վալենտինա Մատվեևան: Գրողի ստեղծագործությունների գնահատությանն իրենց ելույթները նվիրեցին ընթերցողներ Տատի Իգնատևան, Ռոբերտ Պողոսովը, գրադարանավար Մարգարիտ Հակոբյանը և ուրիշներ:

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ուկրաինայի պետական պատմական թանգարանում բացված է հայկական ասեղնագործության ու կերամիկայի ցուցահանդես: Սովետական Հայաստանի կազմավորման 60-ամյակին նվիրված այս ցուցահանդեսում ներկայացված է մոտ 300 աշխատանք: Հետաքրքրությամբ են դիտվում «Ասեղնագործություն Վասպուրականի հայ կանանց» (20-րդ դար), «Արծաթե սափոր» (գործ՝ Ն. Կույումջյանի), «Իգդիրի գորգ», «Տղամարդու տոնական հագուստ» և այլ գործեր:

Ցուցահանդեսում տեղ են գտել նաև արծաթագործական ու կերամիկական իրեր, որոնք նույնպես մեծ հետաքրքրություն են առաջացրել քաղաքի արվեստասեր հասարակայնության շրջանում:

Դ. ԵՐԵՄՅԱՆ

Կիև

## ՓՐԿԱՐԱՐ ՁԵՌՔԵՐ

Երևան լույս աշխարհ եկավ ներքին օրգանների լուրջ արատով, վտանգ էր սպառնում նրա

...

Տոր մեթոդը» նրա թեկնածուական դիսերտացիայի թեման էր:

Ցոլակ Սահակյանի վիրաբու-